



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ  
Ն Ա Խ Ա Ր Ա Ր

ՀՐԱՄԱՆ

< 09 > 17 հոկտեմբերի 2015թ. N 2/3326-Ա

Վ.ՍԻՍԱԿՅԱՆԻՆ, Ս.ՕՀԱՆՅԱՆԻՆ ԵՎ Մ.ԲԵԺԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի  
44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների  
նախարարության հարկային և մաքսային ծառայության մարմինների ծառայողական  
քննություն անցկացնող հանձնաժողովի N 50/2015 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի Նախաբացթողումային  
հսկողության վարչության Գուգարքի բաժնի Բագրատաշենի բաժանմունքի 3-րդ  
հերթափոխի գլխավոր մաքսային տեսուչ Վարդան Սիսակյանին հայտարարել  
նկատողություն:
2. ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի Գուգարքի  
տարածաշրջանային մաքսատան Բագրատաշենի մաքսային կետի մաքսային  
ձևակերպումների 3-րդ բաժանմունքի ավագ մաքսային տեսուչ Սուրեն Օհանյանին  
հայտարարել նկատողություն:
3. ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի Գուգարքի  
տարածաշրջանային մաքսատան Բագրատաշենի մաքսային կետի մաքսային  
ձևակերպումների 3-րդ բաժանմունքի մաքսային տեսուչ Մամիկոն Բեժանյանին  
հայտարարել նկատողություն:
4. ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի Անձնակազմի կառավարման  
վարչության պետ Ե.Սարգսյանին - հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:
5. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Գ.ԽԱԶԱՏՐՅԱՆ